



ԵՅԳԾ Տեղեկագիր

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների
ծրագրի եռամսյակային հրատարակություն



№ 1 (1)
2007թ. հոկտեմբեր-դեկտեմբեր



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԵՅԳԾ-ն ԱՄՆ ԱԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը մեկնարկել է 2004թ. հոկտեմբերին: Ծրագիրը գործում է Չայնաստանի 80 համայնքներում եւ նպատակ ունի խթանելու քաղաքացիների մասնակցությունը հանրային հարցերի լուծման գործում: Ծրագրի շրջանակներում համայնքներին տրամադրվում է կազմակերպչական աջակցություն Երիտասարդական գործունեության ակումբներ (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովներ (ՀԳՀ) հիմնադրելու համար: ԵՅԳԾ-ն ֆինանսավորում է չի տրամադրում համայնքների կողմից նախատեսվող եւ իրականացվող ծրագրերի համար: Սույն տեղեկագրում նկարագրված նախաձեռնությունները կազմակերպվել են համայնքների կողմից եւ ֆինանսավորվել են տեղական տարբեր հովանավորների կամ դրո՛ր կազմակերպությունների կողմից:

Արագածի ՀԳՀ-ն անդրադառնում է համայնքի բնակիչների խնդիրներին. հանդիպում կաղաստրի պետական կոմիտեի հետ

Հանրային հարցերի հասցեագրման գործում համայնքի բնակիչների ներդրումն ապահովելու նպատակով Արագածի Համայնքի գործունեության հանձնաժողովը (ՀԳՀ) համայնքի մարդաշատ վայրերում տեղադրել է առաջարկությունների 9 արկղ: Վերջին ամիսների ընթացքում արկղերում ստացված նյութերի մի մասը վերաբերում էր կաղաստրի տարածքային գրասենյակների կողմից՝ հողի եւ անշարժ գույքի չափագրումներում թույլ տրված անճշտությունների հարցին: Արագածի Համայնքի գործունեության հանձնաժողովը քննարկել է բնակիչների կողմից ներկայացված հարցը և դիմել գյուղապետարանին՝ խնդիրը համատեղ քննարկելու և դրա լուծման հնարավոր ուղիները գտնելու համար: ՀԳՀ-ի և գյուղապետարանի անձնակազմի համատեղ քննարկման արդյունքում որոշվել է հանդիպում կազմակերպել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կաղաստրի պետական կոմիտեի նախագահ պրն. Մանուկ Վարդանյանի հետ: Տեղեկանալով կազմակերպվող հանդիպման մասին՝ հարեւան համայնքների բնակիչները խնդրեցին ՀԳՀ-ին եւ համայնքի ղեկավարությանը իրենց եւս հնարավորություն տալ մասնակցելու այդ հանդիպմանը, քանի որ իրենք էլ ունեին խնդիրներ՝ կապված վերոհիշյալ հարցի հետ: Հաշվի առնելով

խնդրի լուծման կարելուությունը՝ հանդիպմանը հրավիրվեցին Ապարանի տարածաշրջանի 25 համայնքների ղեկավարներ, որոնք, այնուհետեւ, իրենց համայնքներում բնակիչներին կտեղեկացնեն հարցի կարգավորման ուղիների մասին: ՀԳՀ-ի հրավերով հանդիպմանը մասնակցեց նաեւ ԱԺ պատգամավոր Լյուվա Խաչատրյանը: Հանդիպման օրակարգի հիմնական հարցը անշարժ գույքի առջ ու վաճառքի գործընթացի բարելավումն էր եւ բնակիչների՝ հողի եւ անշարժ գույքի սեփականության փաստաթղթերում կաղաստրի տարածքային գրասենյակների կողմից կատարված

չափագրումներում թույլ տրված անճշտությունների ուղղումը: Հանդիպման ժամանակ ներկայացվեցին համայնքի բնակիչների կողմից ստացված բողոքները, քաղաքացիներին պատկանող հողատարածքների չափագրումներում թույլ տրված անճշտությունների հետեւանքները եւ այդ կապակցությամբ ծագած վեճերը: Տեղեկանալով այդ ամենի մասին՝ պրն. Վարդանյանը նշեց, որ կստեղծվի հատուկ հանձնաժողով, որը մանրամասն կուսումնասիրի հարցը, այնուհետեւ կզբաղվի դրա կարգավորմամբ: Գործընթացն արդեն սկսվել է, իսկ այն փաստը, որ իրենց ծայրը լսվել է, ոգեշնչեց համայնքի բնակիչներին:



Կաղաստրի ներկայացուցիչների եւ գյուղապետերի հանդիպումը՝ կազմակերպված Արագածի ՀԳՀ (Արագածոտն մարզ) գործունեության կենտրոնում

«Երեք օր Ախուրյանի ԵԳԱ-ում» Երիտասարդների քաղաքացիական կրթության ծրագիր

Նոյեմբերին Ախուրյանի Երիտասարդական գործունեության ակումբը (Շիրակի մարզ) իրականացրեց «Երեք օր Ախուրյանի ԵԳԱ-ում» Երիտասարդների քաղաքացիական կրթության



«Երեք օր Ախուրյանի ԵԳԱ-ում» Երիտասարդների քաղաքացիական կրթության ծրագրի մասնակիցները

ծրագիրը (նոյեմբերի 9-11-ը): ԵԳԱ անդամները համայնքում հայտարարել էին ծրագրի մասին եւ դիմումների ու հարցազրույցների միջոցով ծրագրին մասնակցելու համար ընտրել էին 20 երիտասարդ: Եռօրյա հազեցած դասընթացի արդյունքում երիտասարդները գիտելիքներ ստացան քաղաքացիության եւ քաղաքացիական իրավունքների, ժողովրդավարության, մարդու իրավունքների, ոչ ֆորմալ կրթության, համայնքային ծառայություններում եւ կամավոր աշխատանքներում երիտասարդների ներգրավվածության, երիտասարդական պետական քաղաքականության եւ այլ

թեմաների վերաբերյալ: Դասընթացների մեծ մասը վարում էին ԵԳԱ անդամներ Արթուր Նաջարյանը, Սեդա Դարբինյանը եւ Շահանե Գասպարյանը, որոնք մասնակցել էին ԵՅԳԾ «Երեւանը հինգ օրում» քաղաքացիական կրթության ծրագրին եւ որոշել էին իրենց ստացած գիտելիքները եւ հմտությունները փոխանցել իրենց համայնքի երիտասարդներին: Դասընթացը անց էր կացվում տարբեր ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ՝ վարժանքներ, քիմային աշխատանք եւ քննարկումներ փոքր խմբերով, ներկայացումներ եւ այլն:

շարունակությունը՝ էջ 2

Այս համարում՝

<i>Բերքի տուն Լեջանում</i>	2
<i>«Երեք օր Ախուրյանի ԵԳԱ-ում» (շարունակություն)</i>	2
<i>Երեք քարոզարշավ Վահագնիում՝ բնապահպանություն, հակաբրաֆիքինգ, պայքար ծխելու դեմ</i>	2
<i>Հաշմանդան աշակերտի ինտեգրումը Հայթադի դպրոցում</i>	2
<i>Քաղաքացիական գործողությունների պլանավորման հանդիպումներ. համայնքի առաջնահերթությունները</i>	3
<i>Ապարանի ԵԳԱ. «Երիտասարդների դերը կոռուպցիայի դեմ պայքարում»</i>	3
<i>Համագործակցություն Հայ կամավորների միության հետ. Գոմք գյուղ</i>	3
<i>Աշակերտների ուսումնական այցը Մարգահովիտի գյուղապետարան</i>	4
<i>Քաղաքացիական ակտիվություն Կոտայքի մարզում՝ համայնքի կարիքների հասցեագրում</i>	4

ԵՅԳԾ-ում ընդգրկված համայնքներ

- Ներկայումս հանրապետության տարածքում գործում է Երիտասարդական գործունեության 32 ակումբ եւ Համայնքի գործունեության 37 հանձնաժողով
- Ամենափոքր համայնքը Ձուվաշենն է, որն ունի 206 բնակիչ, իսկ ամենամեծը՝ Դիլիջանը՝ 16,202՝ բնակիչ
- Անցած երեք տարիների ընթացքում ծրագրին մասնակցել է ավելի քան 1,500 կամավոր եւ իրականացվել է ավելի քան 1,000 քաղաքացիական նախաձեռնություն

*2001թ. մարդահամար, <http://www.amsat.am>

Առաջին ամենամյա համայնքային բերքի տոնը Լեջանում

Հոկտեմբերին Լեջանի ԵԳԱ-ն (Լոռու մարզ) հանդես եկավ համայնքում Բերքի տոն կազմակերպելու նախաձեռնությամբ: Քանի որ համայնքում այդպիսի միջոցառում առաջին անգամ էր կազմակերպվում, ԵԳԱ անդամները որոշեցին համայնքի բնակիչներին շրջանում անցկացնել հարցում՝ պարզելու, թե արդյոք նրանք կցանկանան մասնակցել այդ միջոցառմանը: Հարցման արդյունքները դրական էին. համայնքի անդամները մեծ խանդավառությամբ ընդունեցին գաղափարը և իրենց պատրաստակամությունը հայտնեցին մասնակցելու Բերքի տոնին:

Այսպիսով, հոկտեմբերի 6-ին համայնքի բնակիչները հավաքվել էին գյուղի կենտրոնում և զարդարել ԵԳԱ անդամների կողմից համայնքի 6 թաղամասերի համար նախատեսված սեղանները: Գեղեցիկ զարդարված սեղանները լի էին տարբեր տեսակի մրգերով,

բանջարեղենով և ստացված բերքից պատրաստված համեղ կերակրատեսակներով: Տոնը շարունակվեց մինչև օրվա վերջ. համայնքի բնակիչները համոտեսում էին ավտորժայի կերակուրները, փոխանակում առատ բերք ստանալու իրենց փորձը և կերակուրների պատրաստման բաղադրատոմսերը, երգում, պարում, ասումնջում և մասնակցում տարբեր զվարճալի խաղերի:

Միջոցառմանը հրավիրված էին նաև հյուրեր հարեան գյուղերից և քաղաքներից: Տոնի ավարտին համայնքի բնակիչներն իրենց շնորհակալությունը հայտնեցին ԵԳԱ անդամներին այդ գերազանց զարդափարի և միջոցառումը շատ լավ կազմակերպելու համար և խնդրեցին այն դարձնել ամենամյա և այսուհետ ամեն տարի համայնքում կազմակերպել Բերքի տոն:

Ախուրյանի ԵԳԱ

սկզբը՝ էջ 1



Բերքի տոն՝ կազմակերպված Լեջանի ԵԳԱ-ի (Լոռու մարզ) կողմից

ԵԳԱ բոլոր անդամները ակտիվորեն ներգրավված էին ծրագրի պլանավորման, կազմակերպման և իրականացման գործում: Ծրագրի արդյունքում ձևավորվեց ակտիվ և համախմբված երիտասարդների թիւմ, որը պատրաստվում է շարունակել ԵԳԱ-ի հետ իրենց համագործակցությունը և որպես իրենց առաջին համատեղ նախաձեռնություն՝ մոտ ապագայում համայնքում իրականացնել երիտասարդների ժամանցային վայրի ստեղծման ծրագիր:

Վահագնի ԵԳԱ-ի կողմից իրականացվող քարոզարշավներ՝ Բնապահպանություն, Հակաթրաֆիքինգ, Ո՛չ ծխախոտին

Նոյեմբերին Վահագնի ԵԳԱ-ն (Լոռու մարզ) ակտիվորեն ընդգրկված էր երեք տարբեր քարոզարշավների իրականացման մեջ: Դրանք էին՝ «Բնապահպանություն», «Հակաթրաֆիքինգ» և «Պայքար ծխելու դեմ» քարոզարշավները: Բնապահպանական քարոզարշավի շրջանակներում ԵԳԱ անդամները կազմակերպեցին մի շարք համդիպումներ դպրոցի աշակերտների, ինչպես նաև համայնքի այլ բնակիչների հետ՝ քննարկելու էկոլոգիայի, շրջակա միջավայրի աղտոտման և բնապահպանության վերաբերյալ տարբեր այլ հարցեր: Ազգային շրջանակներում ԵԳԱ անդամները պատրաստել էին նաև կտորե պայուսակներ «Ես պլաստիկ պայուսակ չեմ» հաղորդագրությամբ, որոնք նրանք տարածել էին համայնքի բնակիչների շրջանում՝ կոչ անելով նրանց հնարավորինս նվազեցնել պլաստիկ պայուսակների օգտագործումը: «Հակաթրաֆիքինգ» քարոզարշավի

կազմակերպումից առաջ ԵԳԱ անդամները մասնակցել էին ՄԱԿ-ի ներկայացուցիչների կողմից կազմակերպված համանուն սեմինարին, որից հետո ԵԳԱ անդամները նույն թեմայով սեմինարներ էին կազմակերպել և անցկացրել համայնքի դպրոցի աշակերտների համար: ԵԳԱ անդամները նաև պատրաստել էին թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվական նյութեր և տարածել էին դրանք համայնքի երիտասարդների շրջանում: «Պայքար ծխելու դեմ» ակցիայի շրջանակներում ակումբի անդամները համայնքում կազմակերպել էին «Ֆորում թատրոն», որի ընթացքում ԵԳԱ 26 անդամներ ներկայացրան էին թեմայի վերաբերյալ տարբեր սյուժեներ: Միջոցառման նպատակն էր դրամայի և դերակատարումների միջոցով բարձրացնել երիտասարդների իրազեկությունը ծխախոտի օգտագործման հետևանքների վերաբերյալ: Երիտասարդները քարոզում էին նաև իրենց ընտանիքներում՝ փորձելով համոզել իրենց ծխող ծնողների թողնել այդ վնասակար սովորությունը:

Հայթաղի ՀԳՀ-ն խթանում է հաշմանդամ աշակերտի ինտեգրումը. թեքահարթակի կառուցում դպրոցի մուտքի մոտ

Հոկտեմբեր ամսին Հայթաղի ՀԳՀ-ն (Արմավիրի մարզ) հանդիպում էր կազմակերպել գյուղի դպրոցի տնօրենի հետ՝ քննարկելու համայնքաբնակ 12 տարեկան հաշմանդամ երեխայի դպրոց հաճախելու հարցը: Հեմաշարժական համակարգի հետ կապված խնդիրներ ունենալու պատճառով երեխան մեկուսացված է տանը և հնարավորություն չունի ստանալու ֆորմալ կրթություն: ՀԳՀ անդամները դպրոցի տնօրենին խնդրեցին աջակցել երեխայի դպրոց հաճախելու համար համապատասխան պայմաններ ստեղծելու գործին: Դպրոցի տնօրենն իր պատրաստակամությունը հայտնեց աջակցելու և ՀԳՀ անդամներին տրամադրեց դպրոցի մուտքի մոտ թեքահարթակ կառուցելու համար անհրաժեշտ շինարարական նյութերը: Նա նաև առաջարկեց տեղափոխել այն դասարանը, որտեղ սովորելու է տղան, առաջին հարկ՝ երեխայի համար դպրոցի ներսում տեղափոխվելն ավելի դյուրին դարձնելու նպատակով: ՀԳՀ անդամները համդիպեցին նաև հաշմանդամ երեխայի ծնողների հետ՝ երեխայի դպրոց հաճախելու համար նրանց համաձայնությունը եւս ստանալու համար: ՀԳՀ անդամները համայնքի այլ բնակիչների հետ միասին դպրոցի մուտքի մոտ կառուցեցին թեքահարթակը: Ակնկալվում է, որ հաջորդ ուսումնական տարվա սկզբից հաշմանդամ երեխան կհաճախի դպրոց:

Կարենոր է, որ յուրաքանչյուր երեխա՝ անկախ ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամությունից, ստանա կրթություն



Հաշմանդամների մուտքը Հայթաղի (Արմավիրի մարզ) դպրոց հնարավոր դարձնելու նպատակով թեքահարթակի կառուցում

«Ես պլաստիկ պայուսակ չեմ». զրված էր Վահագնի ԵԳԱ անդամների կողմից պատրաստված կտորե պայուսակների վրա, որոնք նրանք տարածում էին համայնքում՝ իրենց կողմից նախաձեռնված բնապահպանական քարոզարշավի շրջանակներում



Քաղաքացիական գործողությունների պլանավորման հանդիպումներ. համայնքի առաջնահերթությունների քննարկում եւ ծրագրերի կազմում

Այս եռամսյակի ընթացքում ԵՅԳԾ մարզային համակարգողները 10 նորաստեղծ ԶԳԳ/ԵԳԱ- ներում անցկացրեցին Քաղաքացիական գործողությունների պլանավորման հանդիպումներ:

Վերոհիշյալ հանդիպումները անց են կացվում մասնակցային եւ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ, ինչը ապահովում է բոլոր մասնակիցների ներդրումը գործողությունների պլանավորման գործընթացում: Հանդիպման ընթացքում իրականացվում է երիտասարդության եւ համայնքների կարիքների բացահայտում, գնահատում եւ առաջնահերթությունների սահմանում, ինչպես նաեւ ծրագրերի իրականացման համար համայնքում առկա միջոցների սահմանում, եւ այս ամենի արդյունքում էլ կազմվում է ԵԳԱ/ ԶԳԳ գործողությունների պլանը: Նույնըբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում մոտ 200 մարդ մասնակցել է այս մեկօրյա սեմինար-հանդիպումներին:

Հանդիպումների ընթացքում մասնակիցների կողմից սահմանված առաջնահերթություններից էին.

- Համայնքային տեղեկագրերի կամ թերթերի տպագրում
 - Երիտասարդների համար կրթա-մշակութային ծրագրերի իրականացում
 - Աղբահանություն
 - Սպորտադաշտերի եւ մարզադահլիճների վերանորոգում/ վերազինում
 - Երիտասարդների զբաղվածություն
 - Ինտերնետի մատչելիություն
 - Ծառատունկ/կանաչապատում
- Հանդիպման ավարտին յուրաքանչյուր համայնք ունենում է մշակված *Գործողությունների պլան*, որը հանդիսանում է ԵԳԱ/ԶԳԳ կողմից իրականացվող ծրագրերի հիմքը:



Քաղաքացիական գործողությունների պլանավորման հանդիպում Վերին Խոտանան գյուղի (Սյունիքի մարզ) նորաստեղծ ԶԳԳ-ում

«Երիտասարդների դերը կոռուպցիայի հետ պայքարում» Ապարանի ԵԳԱ-ի կողմից կազմակերպված սեմինար

Նույնըբերին Ապարանի ԵԳԱ-ն (Սրագածոտն մարզ) կազմակերպեց սեմինար՝ «Երիտասարդների դերը կոռուպցիայի դեմ պայքարում» թեմայով:

Սեմինարը վարելու համար ԵԳԱ անդամները հրավիրել էին քաղաքացիական կրթության ուսուցիչ Գագիկ Խաչատրյանին: Քննարկումը հիմնականում ծավալվեց կրթության համակարգում կոռուպցիայի դրսևորումների շուրջ: Սեմինարի ընթացքում ԵԳԱ անդամներն եկան այն եզրահանգման, որ կոռուպցիան տեղ է գտնում կրթական համակարգում աշակերտների/

ուսանողների եւ ուսումնական հաստատությունների իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ տեղեկատվության պակասի հետևանքով:

ԵԳԱ անդամները որոշեցին պայքարել այդ երեւույթի դեմ ուսանողների իրավունքների եւ ուսումնական հաստատությունների պարտականությունների վերաբերյալ հանրային իրազեկման ավելի շատ ակցիաների եւ միջոցառումների կազմակերպման, ինչպես նաեւ ուսանողների շահերը պաշտպանելու եւ նրանց այդ թեմաներով խորհրդատվություն տրամադրելու միջոցով:

«Կրթական ոլորտում կոռուպցիան տեղ է գտնում ուսումնական հաստատությունների եւ ուսանողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ տեղեկատվության պակասի պատճառով»

Այգեհովիտ գյուղի բնակիչները տեղեկացված են համայնքի ավագանու աշխատանքների վերաբերյալ

Դեկտեմբերին Այգեհովիտի ԶԳԳ-ն (Տավուշի մարզ) կազմակերպեց համայնքային ժողով ավագանու հետ, որին հրավիրված էին համայնքի բոլոր անդամները, այդ թվում նաեւ ուսանողներ եւ դպրոցի աշակերտներ: Ժողովի նպատակն էր համայնքի բնակիչներին տեղեկացնել համայնքի եւ ավագանու աշխատանքների, ինչպես նաեւ 2008թ. համայնքի բյուջեով նախատեսված հատկացումների մասին, եւ խթանել բաց երկխոսությունը համայնքի բնակիչների եւ ավագանու միջեւ:

Հայ կամավորների միության շարունակական ներգրավվածությունը. Գոմք գյուղի համայնքային կենտրոնի վերանորոգման ծրագիր

2006թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսների ընթացքում ԵՅԳԾ-ն հյուրընկալում էր Հայ կամավորների միության (ՀԿՄ) կամավոր Վերոնիկա Սիրանոսյանին: ԵՅԳԾ-ի հետ համագործակցության ընթացքում Վերոնիկան մասնակցեց Գոմք գյուղում (Վայոց Ձոր) անցկացված Քաղաքացիական գործողությունների պլանավորման հանդիպմանը, ինչից հետո որոշեց հաջորդ երկու շաբաթը մնալ գյուղում՝ աջակցելու այնտեղ հիմնադրված ԶԳԳ-ի աշխատանքների սկզբնական փուլում:

ՀԿՄ-ի ծրագրի մի մասն է կազմում կամավորների կողմից *Շարունակական ներգրավվածության առաջարկի* մշակումը, որտեղ կամավորը նկարագրում է, թե ինչպես կարող է կապի մեջ մնալ եւ շարունակել աջակցել Հայաստանի ժողովրդին: Վերոնիկան իր առաջարկում նախատեսել էր աջակցել համայնքային ծրագրերի իրականացման համար դրամահավաքի կազմակերպման գործում:



Գոմքի (Վայոց Ձոր) համայնքային կենտրոնի շենքը

Այս եռամսյակի ընթացքում Գոմքի ԶԳԳ-ն դիմել էր Վերոնիկային իրենց օգնելու՝ Հայաստանի Սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից համայնքային կենտրոնի շենքի վերանորոգման ծրագրի համար համայնքից պահանջվող ներդրման մի մասը հանդիսացող՝ \$2,500 հավաքելու նպատակով դրամահավաք կազմակերպելու խնդրանքով:

Վերոնիկան հատուկ ուսուցիչի միջոցով (www.fundable.com) կազմակերպեց դրամահավաք, որի արդյունքում հավաքվեց \$1,610, իսկ մնացած գումարը նա հավաքեց իր ընկերների եւ ընտանիքի կողմից կատարված հանգանակությունների միջոցով: Այսպիսով, Գոմք գյուղը կարողացավ ապահովել ծրագրի իրականացման համար համայնքից պահանջվող ներդրումը, եւ համայնքային կենտրոնի շենքի վերանորոգման աշխատանքները կսկսվեն 2008թ. գարնանը:



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

Կրթությանը զարգացման ակադեմիա
Այգեձոր 10,
0019 Երևան
Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ (374 10) 225 636
Ֆաքս՝ (374 10) 275 686
Էլ փոստ՝ ycap@aed.am

Երիտասարդության և համայնքների
գործողությունների ծրագիր



Academy for Educational Development

Մեր ուսուկայքերն են՝
<http://ycap.am>
<http://aed.am>

Ուսումնական այց Մարգահովիտի գյուղապետարան. աշակերտներն առաջին ձեռքերից ստանում են տեղեկություններ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատանքների վերաբերյալ

Նոյեմբերին Մարգահովիտի ՉԳԾ-ն (Լոռու մարզ) դպրոցի բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպեց ուսումնական այց Մարգահովիտի գյուղապետարան: ՉԳԾ անդամները պայմանավորվածություն էին ձեռք բերել գյուղապետարանի աշխատակիցների հետ առ այն, որ բարձր դասարանների 20 աշակերտներ կայցելեն գյուղապետարան, կշրջեն աշխատասենյակներով և կծանոթանան գյուղապետարանի գործառնություններին, կառուցվածքին, աշխատակազմի պարտականություններին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման առնչվող օրենքներին և

կանոնակարգերին: Գյուղապետ Սեյրան Անանյանը հանդիպեց աշակերտների հետ, պատասխանեց նրանց հարցերին և մանրամասն ներկայացրեց, թե ինչպես է ձևավորվում համայնքի բյուջեն: Քանի որ մեկ օրը բավարար չէր ծանոթանալու գյուղապետարանում իրականացվող բոլոր գործընթացներին և կիրառվող ընթացակարգերին, ՉԳԾ-ն միջնորդեց և ստացավ գյուղապետարանի համաձայնությունը, որ յուրաքանչյուր աշակերտ կցվի գյուղապետարանի որոշակի աշխատակցի հետ և հաջորդ 5 օրերի ընթացքում ունենա հնարավորություն ավելի մոտիկից ծանոթանալու գյուղապետարանի աշխատանքներին:



Մարգահովիտի դպրոցի աշակերտների համար Մարգահովիտի ՉԳԾ-ի (Լոռու մարզ) կազմակերպած ուսումնական այցը գյուղապետարան

ԵՉԳԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը իրականացվում է Կրթությանը զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) կողմից: ԵՉԳԾ հիմնական նպատակն է ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը և որա կարելությունը:

Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնք միջոցով կխթանվի երիտասարդների և համայնքների այլ անդամների մասնակցությունն իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային և հանրային խնդիրների լուծմանը զբաղվող երիտասարդական գործունեության ակունքների (ԵԳԱ) և Համայնքների գործունեության հանձնաժողովների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների և համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման և հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին և համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները և զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին և հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը, կբխեն հանրության և համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սիստեմատիկ բարեփոխումների իրականացմանը և կխթանեն համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

Քաղաքացիական ակտիվություն Կոտայքի մարզում. ՀԳՀ-ն հասցեագրում է համայնքի և երիտասարդության կարիքները

Մտահոգված լինելով համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների խնդիրներով՝ Կոտայք գյուղի ՀԳՀ-ն հոկտեմբեր ամսին նամակով դիմեց «ԱԴԻՍ» կազմակերպությանը՝ խնդրելով օգնություն տրամադրել Կոտայքի սոցիալապես անապահով ընտանիքներին: ՀԳՀ-ի կողմից ուղարկված նամակ-խնդրագիրը ստացավ դրական արձագանք և «ԱԴԻՍ» կազմակերպության կողմից տրամադրվեց հազուստով լի 4 արկղ: ՀԳՀ անդամները գյուղապետարանի հետ համագործակցությամբ ճշտեցին գյուղի անապահով ընտանիքների ցուցակները և նրանց հրավիրեցին գյուղապետարան՝ օգնությունը ստանալու համար: Դեկտեմբերին Կոտայքի ՀԳՀ-ն կազմակերպեց հանդիպում համայնքի բնակիչների և գյուղապետարանի աշխատակիցների և գյուղապետի հետ՝ քննարկելու աղբը չթույլատրվող վայրերում նետելու համար տուգանքներ սահմանելու և կիրառելու հարցը: Հանդիպման նպատակն էր նաև բարձրացնել գյուղի անակիչների իրազեկությունը ՀԳՀ և գյուղապետարանի ջանքերի արդյունքում գյուղում ներդրված աղբահանության մեխանիզմի վերաբերյալ: ՀԳՀ անդամները բազմիցս շեշտեցին աղբահանման կանոնները պահպանելու կարևորությունը: Որոշվեց, որ տուգանք սահմանելու հարցը կներառվի Ավագանու հաջորդ նիստի օրակարգում: ՀԳՀ-ը անդամները հուսով են, որ տուգանքի ներմուծումը կօգնի վերացնել համայնքի բնակիչների կողմից աղբը ջրատարի մեջ կամ այլ անթույլատրելի վայրերում նետելու սովորույթը: Այս եռամսյակի ընթացքում Եղվարդի ՀԳՀ-ն կազմակերպել է կլոր սեղան-քննարկում քաղաքացիական, «Կանանց ասոցիացիա» ՀԳՀ-ի ներկայացուցիչների և համայնքի

երիտասարդության հետ: Քննարկման թեման էր քաղաքում երիտասարդների ժամանցային վայրի բացակայության հարցը: Հանդիպման ընթացքում քաղաքապետը ՀԳՀ-ին առաջարկեց մշակել և քաղաքապետարան ներկայացնել կոնկրետ ծրագիր՝ ուղղված Եղվարդում երիտասարդական ժամանցային վայրի ստեղծմանը, և խոստացավ, որ հավանության արժանանալու դեպքում ծրագրի իրականացման համար կհատկացվեն ֆինանսական միջոցներ: ՀԳՀ-ն՝ ցանկանալով այս գործընթացում ներգրավել քաղաքի բոլոր երիտասարդներին և իմանալ նրանց կարծիքն այն մասին, թե ինչպիսի ժամանցային կենտրոն կամ վայր կցանկանային նրանց տեսնել Եղվարդում, քաղաքի 3 դպրոցներում հայտարարեց շարադրությունների մրցույթ՝ «Երիտասարդական ժամանցային վայրի ստեղծում իմ Եղվարդում» թեմայով: Շարադրությունների մրցույթի ավարտին ՀԳՀ-ն կազմեց գնահատող հանձնաժողով, որը պետք է կարդա և ամփոփի երիտասարդների կողմից ստացված առաջարկները: Արդյունքների ամփոփումից հետո ՀԳՀ-ն նախատեսում է կազմակերպել հանդիպում երիտասարդների և գյուղապետի հետ՝ ներկայացնելու և քննարկելու ստացված առաջարկները և ընտրելու կոնկրետ գաղափար, որը, որպես հաջորդ քայլ, կմշակվի և կվերածվի ծրագրի: Հաշվի առնելով ծրագրի իրականացման համար առկա միջոցների սահմանափակ լինելու հանգամանքը՝ ՀԳՀ-ն ցանկանում էր, որ ծրագրի գաղափարը գա հենց երիտասարդներից, և որ այն իսկապես ծառայի ի շահ երիտասարդների: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե երիտասարդներն ընդգրկված են ծրագրի առաջին իսկ փուլից: